Արձանագրություն N 3

Առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտ պատվաստանյութերի ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/40» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստիին

ք. Երևան «20» «Սեպտեմբեր» 2023թ.
ժամը 15:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Գ. Սահակյան
Հանձնաժողովի անդամներ Ա. Հարոյան, Ն. Դանիելյան

Հանձնաժողովի քարտուղար Հ. Սարգսյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Գ. Սահակյան)

Ընդունել ի գիտություն, որ 14.08.23թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2023 թվականի օգոստոսի 29-ին, ժամը 14:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2023 թվականի օգոստոսի 30-ին ժամը 14:00-ին: 2023 թվականի օգոստոսի 31-ին ժամը 14:00-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հայտ է ներկայացրել մեկ կազմակերպություն.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	«Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ	tender@theopharma.am	00471216

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Գ. Սահակյան)

Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ծրարում առկա են հրավերով պահանջվող թաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Գ. Սահակյան)

Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ծրարը կազմված է հրավերի պահանջներին ոչ համապատասխան՝ չի ներկայացվել Առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից տրված հավաստող տեղեկանքը ՀՀ-ում չգրանցված դեղերի մասով: Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատումը և հնարավորություն տալ շտկել մասնակցին առձանագրված անհամապատասխանությունը և գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով ծանուցել է մասնակցին շտկման մասին: Ստորև ներկայացվում է գնահատող հանձնաժողովի կողմից կազմված շտկման ծանուցումը

Հարգելի մասնակից:

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/40» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է անհամապատասխանություն, որը ենթակա է շտկման՝ չի ներկայացվել Առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից տրված հավաստող տեղեկանքը ՀՀ-ում չգրանցված դեղերի մասով: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անճշտությունը և պահանջվող տեղեկանքը ներբեռնել էլեկտրոնային աճուրդ համակարգ:

4. Հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Գ. Սահակյան)

14.09.2023թ. հայտերի գնահատումը կասեցվել էր՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտը թերի, ոչ ճիշտ ներկայացնելու և վերջիններս շտկելու նպատակով:

15.09.2023թ. դրությամբ՝ սահմանված ժամկետում էլեկտրոնային աճուրդ համակարգում հասանելի էր ծանուցված մասնակցի կողմից համակարգում ներբեռնված պահանջվող տեղեկանքները:

Որոշվեց. Շտկում ներկայացրած մասնակից՝ «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Մասնակիցների առաջարկաց գների մասին

(Գ. Սահակյան)

30.08.2023թ. կայացած հակադարձ աճուրդից հետո մասնակցի կողմից ներկայացված վերջնական գինը ներկայացվում է կից ֆայլով (excel):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Գ. Սահակյան)

Հրավերի վերաբերյալ 17.08.2023թ. ներկայացվել է հարցում, որին պարզաբանում տրամադրելու համար գնահատող հանձնաժողովը 18.08.2023թ. հրավիրել է նիստ և գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով ներկայացրել է հարցման պարզաբանումը և վերջինիս տրամադրելու մասին հայտարարությունը հրապարակվել է gnumner.am կայքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ընթացակարգի ամփոփման մասին

(Գ. Սահակյան)

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման պահանջները և մասնակիցների կողմից ներկայացված հայտերը.

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/40» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել, հաղթող ճանաչել և կնքել պայմանագիր՝

- «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ն՝ 2-րդ չափաբաժնի մասով՝ 1,800,000,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/40» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած

- 1-ին չափաբաժնի մասով՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ ոչ մի հայտ չի ներկայացվել:

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/40» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ չսահմանել, քանի որ հայտ է ներկայացրել մեկ մասնակից, որի հետ կնքվելու է պայմանագիր՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը 1-ին ենթակետը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ..... Գ. Սայակյան

Անդամներ՝ ..... Ա. Հարոյան

..... Ն. Դանիելյան

Քարտուղար՝ ..... Հ. Սարգսյան

ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/40 ծածկագրով գնման ընթացակարգի
արդյունքերը 30.08.2023թ. Կայացած հակադարձ աճուրդից հետո

«Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ									
Չ/Հ	Անվանումը	CPV	Քանակ	Նախահաշվային գին	Վերջին առաջարկ				
					Արժեք	ԱԱՀ	Գին	Միավոր գին/ առանց ԱԱՀ	Միավոր գին/ ԱԱՀ-ով
2	Ձրծաղիկի դեմ պատվաստանյութ	33651268/501	75,000	-	1,500,000,000 AMD	300,000,000 AMD	1,800,000,000.00 AMD	20,000.00 AMD	24,000.00 AMD